Արձանագրություն N 2-1

ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-26/2 ծածկագրով «Գետերի վրա կամուրջների, կարգավորիչ պատերի հիդրոլոգիական հաշվարկներ» ՀՀ կանոնների հավաքածուի մշակման, տեղայնացման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան                                                                                    14.07.2026թ.
ժամը 10:30

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Գևորգյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ա. Բոյաջյան |
| | Գ. Ծատուրյան |
| | Ա. Չավուշյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Ն. Նիկոլայան |

Բացակայում էր գնահատող հանձնաժողովի անդամ՝ Ս. Թորոսյան

## 1. Գնման ընթացակարգի հայտի բացման օրվա և ժամի, ինչպես նաև՝ հայտ ներկայացրած մասնակցի մասին

---

(Ա. Գևորգյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը, հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել,

բ) գնման ընթացակարգի հայտը բացվել է www.armeps.am կայքի միջոցով 2026 թվականի հուլիսի 14-ին ժամը 10:30-ին,

գ) գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

ՀՀ դրամ

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գնման գին | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ | 7 000 000 | 5 540 000 | 1 108 000 | 6 648 000 |

Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 4, դեմ - 0:

## 2. Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ. հասցեն

---

(Ա. Գևորգյան)

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Գործունեության հասցե | Կապի միջոց | Էլեկտրոնային փոստի հասցե |
|---|---|---|---|---|
| 1 | «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ | ք. Երևան, Տերյան 105 | 010-303-300 /838/, 099-55-67-41 | info@nuaca.am, gnumner.nuaca@gmail.com |

## 3. Մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանության մասին

---

(Ա. Գևորգյան)

3.1 Գնման ընթացակարգի մասնակցի հայտով ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հայտով ներկայացված դիմում հայտարարությունը չի համապատասխանում հրավերով սահմանված Հավելված N 1-ի ձևաչափին:

3.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները՝ գնահատող հանձնաժողովը որոշում է կասեցնել նիստը և ծանուցել «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում **(մինչև 15.07.2026թ. ներառյալ)** շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում շտկում ներկայացվելու դեպքում, հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում այն կգնահատվի անբավարար և կմերժվի:

Արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ շտկումն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-26/2 ծածկագրով հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի tender4@minurban.am էլ. փոստին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:*

## 4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

---

(Ա. Գևորգյան)

4.1 Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել արձանագրված անհամապատասխանությունը մասնակցի կողմից շտկելուց հետո, բայց ոչ ուշ քան 16.07.2026թ. ժամը 10:30-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:*

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | ______________ | Ա. Գևորգյան |
| Անդամներ՝ | ______________ | Ա. Բոյաջյան |
| | ______________ | Գ. Ծատուրյան |
| | ______________ | Ա. Չավուշյան |
| Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղար՝ | ______________ | Ն. Նիկոլայան |